ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 դեկտեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԴ տարի

178
(3028)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏԸ՝ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՈՐՔ, ՔՊ ՆԻՍՏԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Կապանցի պատգամավոր Նարեկ Ղահրամանյանին անհանգստացնում է ՔՊ իշխանության ներսի կոռուպցիան. նա կուսակցության ակտիվի նիստում Սյունիքի մարզում կատարվողի մասին հանդես է եկել զեկույցով:

«Մեզ պատերազմում կրած պարտությունը ներել է մեր ժողովուրդը, մեր շատ սխալների վրա աչք է փակել, ոչ պրոֆեսիոնալ քայլերի համար չի դատապարտել, բայց կուռուպցիայի համար ժողովուրդը մեզ չի ների»: Մոտավորապես այսպիսի խոսքերով է սկսել իր զեկույցը ՔՊ ակտիվի դռնփակ նիստում ԱԺ կապանցի պատգամավոր Նարեկ Ղահրամանյանը:

Նրան շատ է մտահոգում, որ թեեւ 2022 թվականի օգոստոսին պարզ դարձավ, որ ՀՀ Կառավարությունը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում արդեն ձեռք է բերել 21,875 տոկոս բաժնեմաս, բայց ՀՀ հպարտ քաղաքացու կյանքում ոչինչ չի փոխել դա: Պատգամավորն ասել է, որ փոխարենը հարստանում են ՔՊ-ական կամ նրանց հարող պաշտոնյաները:

Նարեկ Ղահրամանյանը հնարավորինս փաստարկված հայտարարել է, որ երբ Կառավարությունը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում իր բաժնետոմսերի կառավարումը հանձնեց Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդին (ԱՆԻՖ), Սյունիքում բոլորը տեսան, թե ինչպես նախկին փոխմարզպետ Նարեկ Բաբայանը, որ շարքային աշխատակից էր, սկսեց հարստանալ իրենց աչքի առջեւ:

Նույն Բաբայանը, երբ նոր էր նշանակվել փոխմարզպետի պաշտոնում, վարում էր TOYOTA VITZ մակնիշի փոքրիկ մեքենա, այժմ նա աշխատանքի է գնում Toyota Land Cruiser 300 մակնիշի ավտոմեքենայով, որն արժե մոտ 150 հազար ԱՄՆ դոլար: Մեքենայի համարանիշները ոչ պակաս թանկարժեք են՝ 01JO001. այն արժե գրեթե 3 մլն դրամից ավելի: Իսկ նրա կինը Toyota Camry մակնիշի ավտոմեքենա է վարում, որի արժեքը մոտավորապես 40 հազար ԱՄՆ դոլար է:

ՔՊ-ներսում քննարկվել է նաեւ, որ բացի «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից ստացված շատ բարձր, սակայն բոլորից գաղտնի պահվող աշխատավարձից, Բաբայանը եկամուտներ է ստանում նաեւ «Նար-Ար» անվանումով ընկերությունից: Սյունիքի մարզում կատարվող մեծ ծավալի աշխատանքները, որոնք կապված են եղել կոմբինատի ֆինանսավորման հետ, փաստացի իրականացրել է Բաբայանը իր եւ մտերիմների ընկերությունների միջոցով. օրինակ՝նա բացել է «Նար-Ար» (Նարեկ, Արման ընկերների) անվանումով ճանապարհաշինարարական ընկերություն՝ հայտարարված մրցույթներին մասնակցելու եւ շահելու նպատակով:

Հավելենք, որ թեեւ ԱՆԻՖ-ի անփառունակ լուծարումից հետո ՋՊՄԿ-ի Կառավարության մասնաբաժնի կառավարումը ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին է անցել, բայց փաստացի իրավիճակի տերը նույն Նարեկ Բաբայանն է, որը նաեւ ՔՊ կուսակցության մարզային ինտրիգների կառավարմամբ է զբաղված:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



Ժողովրդավարության բաստիոն համարվող Հայաստանում, փաստորեն, ղեկավարներին դիմելուց առաջ պետք է մի լավ ծանրութեթեւ անել՝արդյոք խնդրանքը կհայտնվի գործնական զրուցարաններում (chat-երում), թե ոչ: ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, ում հետ խմբակցության ներսում չեն շփվում եւ անգամ ոմանք չեն էլ բարեւում, ամեն մանր-մունր բան ուղարկում է ՔՊ-ի զրուցարաններ: «Ժողովուրդ» օրաթերթի քաջատեղյակ աղբյուրները պատմում են, որ երբ Հայկ Կոնջորյանին խմբակցության անդամները ինչ-որ խնդրանքով դիմում են, օրինակ՝ինչ խոսել հարցազրույցի ժամանակ, գնալ, թե չգնալ ինչ-որ պատվիրակության հետ գործուղման, կամ հրավերն ընդունել, թե ոչ, Կոնջորյանը, առանց այս ու այն կողմ ընկնելու, խնդրանքը եւ/կամ հարցը անմիջապես ուղարկում է ՔՊ-ի զրուցարան՝հայտնելով, թե «այս» պատգամավորը ինձ «այսպիսի» հարցով է դիմել: Այս ամենից էլ կարելի է եզրակացնել, որ Հայկ Կոնջորյանը, ով խմբակցության ղեկավարն է, չի տիրապետում գործընկերների հետ անգամ վարվեցողության տարրական կանոններին, չի կարողանում փոխհարաբերվել, կոնֆիդենցիալություն պահել չգիտի, ու դեռ խոսում է արտահոսքերի անթույլատրելիության մասին: Նրա այս պահվածքը, իհարկե, ՔՊ-ականների շրջանում տարակուսանք է առաջացնում, թե ինչո՞ւ է նա «ամեն մանրուք գցում ՔՊ չաթ»: Պատճառը թերեւս այն է, որ ՔՊ խմբակցության ղեկավարը, մինչ իր այդ պաշտոնին լինելը, չնայած երիտասարդ տարիքին՝3 տարբեր կուսակցությունների անդամ է եղել, եւ գուցե այս պատճառով էլ թիմում վերջինիս անվստահելի են համարում: Հայկ Կոնջորյանը եղել է «Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն» կուսակցության անդամ, «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամ, «Ելք» դաշինքի անդամ: Այս ամենից եւս մեկ անգամ կարող ենք ենթադրել, որ 3 կուսակցություն փոխած ՔՊ-ականին չեն կարող թիմի ներսում վստահել:

2019 թ. հետհեղափոխական Հայաստանում ստեղծվեց Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ ՓԲԸ-ն, որը «ՀՀ-ում պոտենցիալ խոշոր ներդրողներին լիարժեք եւ համալիր խորհրդատվության եւ աջակցության միջոցով պետք է նպաստեր ՀՀ-ում ներդրումային հոսքերի ավելացմանը, ոլորտային ծրագրեր նախաձեռնելու եւ իրագործելու միջոցով Հայաստանի տնտեսության ներուժի զարգացմանը եւ գիտատեխնիկական զարգացման արդյունքների ներդրմանը տնտեսության տարբեր ոլորտներում, ՀՀ-ում գործարար միջավայրի բարելավման եւ գործարար հատվածի համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծման եւ կատարելագործման գործընթացին»: Իսկ ինչ արեց այդ կառույցը. «ձախողվեց», ինչպես խոստովանել է հենց ինքը՝հիմնադիր Նիկոլ Փաշինյանը: «Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները հայտնում են, որ Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի՝ ԱՆԻՖ-ի պատճառով պետությունը ոչ թե տասնյակ միլիոններ է կորցրել, այլ ընդհանուր հաշվարկով վնասը հասնում է 25 միլիարդ դրամի կամ մոտ 63 մլն դոլարի: 2019 թվականին, երբ ձեւավորվեց ԱՆԻՖ-ը, ոչ ոք չէր մտածի, որ այն կարող էր դառնալ ժամանակի կոռուպցիոն գործարքների որջը: «Ժողովուրդ» օրաթերթը, ԱՆԻՖ-ի հաշվետվությունները ուսումնասիրելով, բացահայտեց, որ պետությանը ներդրումներ ապահովելու կոչված մարմնի համար 2019-2023 թվականներին ավելի քան 6 մլրդ ՀՀ դրամ է ծախսվել պետբյուջեից՝ԱՆԻՖ-ի աշխատակիցների աշխատավարձեր, դրան հավասարեցված վճարումներ, հարկեր:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Արտախորհրդարանական եվրոպամետ ուժերը նախորդ շաբաթ «Եվրոպական Միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին քաղաքացիական նախաձեռնությունը» մուտք են արել խորհրդարան: Նախագիծը ԱԺ եվրահնտեգրման հարցերի հանձնաժողովում է, 1 ամիս քննարկումներից հետո՝այն 2025 թվականին կմտնի ԱԺ օրակարգ: Թե ինչ որոշում ունի քաղաքական մեծամասնությունը ԵՄ անդամակցության վերաբերյալ, հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում չհստակեցրեց: Նա ասաց, որ աշխատանքային քննարկումներ են ընթանում, խմբակցության մակարդակով վերջնական որոշում դեռ չունեն: «Հայաստանի Եվրոպական» կուսակցության նախագահ Տիգրան Խզմալյանն էլ ասաց՝չգտի, թե իշխող ուժը ինչ որոշում կկայացնի նախագծի մասով. «Իշխանություններից բարձր մակարդակով ազդակ է եկել, որ պատրաստ են քննարկել նախագիծը, Ալեն Սիմոնյանն էլ էր ասել՝թող ներկայացնեն նախագիծը, կքննարկենք, բայց թե ինչ որոշում կկայացնեն, չենք կարող ասել»: Հիշեցնենք, որ «Ժողովրդավարական ուժերի հարթակ»-ը սեպտեմբերի 16-ից մեկնարկել էր ԵՄ հանրաքվեի հարցով ստորագրահավաքը: Նախաձեռնող խումբը պետք է հավաքեր 50 հազար ստորագրություն, որպեսզի ԵՄ-ին անդամակցության հանրաքվեի հարցը մտներ ԱԺ օրակարգ: Սեպտեմբերի 16-ից մինչեւ նոյեմբերի 14-ը նախաձեռնությունը 60 հազար ստորագրություն էր հավաքել, սակայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դեկտեմբերի 10-ի նիստում վավերացրել էր ԵՄ-ին միանալու 52 351 ստորագրությունը: Եթե Ազգային ժողովը նախագիծը մերժի, նախաձեռնության անդամները պետք է 300 հազար ստորագրություն հավաքեն, որից հետո հարցը կդրվի հանրաքվեի:

ԶՐՈՒՅՑ

«ԴԱՍԱԿԱՆ ԱՎՏՈՐԻՏԱՐԻԶՄ Է». ՍՈՒՐԵՆՅԱՆՑ

Վերջին օրերին ներքաղաքական դաշտում ամենաշատ քննարկվող թեման «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում տեղի ունեցող իրարանցումն է: Նախ, Հովիկ Աղազարյանի շուրջ իրադարձություններ ծավալվեցին՝ սեւ ամպեր կուտակվեցին նախկին ՔՊ-ական պատգամավորի գլխին: Նիկոլ Փաշինյանը դիմեց պատգամավորին՝ հորդորելով վայր դնել պատգամավորական մանդատը, ինչը սակայն մերժվեց: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը վարչության հերթական նիստում որոշում կայացրեց եւ կուսակցությունից հեռացրեց Հովիկ Աղազարյանին, որին հաջորդեց ՔՊ խմբակցությունից Հովիկ Աղազարյանի հեռանալը: Հաջորդ առավոտյան ԱԺ նիստի մեկնարկին Հովիկ Աղազարյանը հայտնեց, որ դուրս է գալիս խմբակցությունից ու շարունակում է պատգամավորական գործունեությունը՝ որպես անկախ պատգամավոր:

Հաջորդը թիրախում հայտնվեց Հակոբ Ասլանյանը, ում, ավտոբուսում տեղի ունեցած միջադեպից հետո, ՔՊ-ականները սրբացնում էին՝ շեշտելով, որ երեք պատերազմ անցած, օրինակելի մարդ է: Սակայն Հովիկ Աղազարյանին թիկունք կանգնելու համար նրան նույնպես հեռացրին՝ սկզբում ՔՊ խմբակցությունից, ապա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից:

Այս թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է քաղաքագետ Սուրեն Սուրենյանցի հետ:

Ստորեւ ներկայացնում ենք հարցազրույցը:

-Պարոն Սուրենյանց, արդեն հստակ է, որ բոլոր այն պատգամավորները, որոնք փորձում են հակառակվել Նիկոլ Փաշինյանին, խիստ պատժվում են՝նրանց մասին տեղեկություններ են հանրայնացվում, խիստ վարկաբեկվում են, ապա կուսակցությունից եւ խմբակցությունից հեռացվում են: Քաղաքական ի՞նչ գնահատական կտաք սրան, ի՞նչ է անում իշխանությունը:

Դասական ավտորիտարիզմ, նույնիսկ ես կասեի՝ պերսոնիֆիցված ավտորիտարիզմ, երբ մեկ մարդու կամքը վեր է թե՛ օրենքից, թե՛ քաղաքական տրամաբանությունից՝ ցանկացած բանից: Ունենք Ձեր նշած իրավիճակը. ով որեւէ հարցում հակադրվում է, պատասխանատվության է ենթարկվում, եթե նույնիսկ հակադրությունը շատ ռացիոնալ է:

Օրինակ՝ Սահմանադրության 94-րդ հոդվածը արգելում էր, որ նա պատգամավորին դիմի՝ մանդատը վայր դնելու խնդրանքով: Նման դեպքում, փաստորեն, Հովիկ Աղազարյանի հետ ոչինչ էլ չէր պատահի, նա կուսակցությունից չէր հեռացվի, նրա մասին այդ գռեհիկ նյութերը չէին տարածվի:

-Ի դեպ, անդրադառնալով նրան, որ պատգամավորի հեռախոսը առգրավել են եւ նամակագրությունը տվել են Նիկոլ Փաշինյանին ու 71 պատգամավորների եւ տեսել, թե ինչ կա այնտեղ: Ինչպե՞ս եք սրան վերաբերվում:

-Նախ ես վստահ եմ, որ նամակագրությունը չեն տվել: Երկար տարիներ ճանաչելով Նիկոլ Փաշինյանին՝ ես վստահ եմ, որ հենց հեռախոսն են տվել նրան, ինքն անձամբ պեղել եւ ուսումնասիրել է: Ըստ էության, տարբերությունը շատ մեծ չէ, թե ինչ են տվել, սակայն գործ ունենք ավտորիտարիզմի շատ գռեհիկ դրսեւորման հետ: Ես Հովիկ Աղազարյանին կամ որեւէ մեկին չեմ պաշտպանում, քանի որ բոլոր այն մարդիկ, որոնք համաձայնել են պատերազմից հետո Նիկոլ Փաշինյանին սատարել, իրենց հարցում ես շատ որոշակի եւ Ձեզ համար կանխատեսելի վերաբերմունք ունեմ: Նրանք պաշտպանության ենթակա չեն, սակայն ես պաշտպանում եմ իմ երկրի Սահմանադրությունն ու քաղաքական տրամաբանությունը եւ բարոյականության նորմերը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՀԱԿՈԲ ԱՍԼԱՆՅԱՆՆ ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ԿՀԱՅՏՆԻ ԻՐ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընտրություններից առաջ իշխող քաղաքական ուժը շարունակում է մաքրել ու վերադասավորել թիմը:

ՔՊ վարչության որոշմամբ դեկտեմբերի 17-ին հերթական կուսակցականը հեռացվեց, Հովիկ Աղազարյանից հետո հերթը նրա ընկերոջինն էր՝ ԱԺ պատգամավոր Հակոբ Ասլանյանինը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ վարչության բոլոր անդամները միաձայն կողմ են քվեարկել Հակոբ Ասլանյանի հեռանալուն: Իշխանականների հիմնական մեղադրանքն այն է, որ կիսում է պետական գաղտնիքի արտահոսքի մեջ մեղադրվող Հովիկ Աղազարյանի տեսակետները ու պաշտպանել է նրան, իսկ ՔՊ-ում Աղազարյանին անգամ պաշտպանելու փորձ արածները խիստ դատապարտման են արժանանում:

ՔՊ-ականները նաեւ պահանջել են, որ վերջինս մանդատը վայր դնի, եթե չի ուզում ավելի վատ ճակատագրի արժանանալ: Հակոբ Ասլանյանը, սակայն, մտադիր չէ մանդատը վայր դնել, շարունակելու է գնալ ԱԺ՝ արդեն անկախ պատգամավորի կարգավիճակով: Վերջինս խոստացել է՝ մինչեւ Ամանոր կհայտնի իր որոշման մասին՝ դնո՞ւմ է մանդատը, թե՞ ոչ:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը դեկտեմբերի 17-ին ընդունել է ՀՀ-ում Բելգիայի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Էրիկ Դե Մույնքին:

Դեսպանը նշանակման կապակցությամբ շնորհավորել է Արփինե Սարգսյանին եւ մաղթել հաջողություններ: Կարեւորելով երկու երկրների առկա սերտ հարաբերությունները՝ նա համագործակցությունը շարունակելու եւ ընդլայնելու պատրաստակամություն է հայտնել: Դեսպանն ընդգծել է, որ դաշնային կապի սպայի նշանակմամբ ապահովելով առավել օպերատիվ կապ՝ խորացել են երկկողմ հարաբերությունները:

Արփինե Սարգսյանը կարեւորել է ինչպես երկկողմ, այնպես էլ ԵՄ շրջանակներում արդյունավետ համագործակցությունը:

Հանդիպմանը քննարկվել է կիբերհանցավորության դեմ պայքարի, կրիպտոարժույթների շուկայում հնարավոր հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ ոստիկանության ծառայողների վերապատրաստումների հարցը: ՆԳ նախարարը կարեւորել է անդրազգային հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ համագործակցությունը՝ նշելով, որ Եվրոպոլում Հայաստանի կողմից կապի սպայի նշանակմամբ նաեւ այս ուղղություններն են ընդգրկվելու:

Արփինե Սարգսյանը կարեւորել է ոչ միայն կենտրոնական ապարատի կարողությունները հզորացնելու, այլեւ տեղերում՝ տարածքային բաժիններում կարողությունների զարգացման ուղղությամբ վերապատրաստումների անցկացումը:

Կողմերը ողջունել են վիզաների ազատականացման գործառնական փուլի մեկնարկը, որը տրվել է դեկտեմբերի 11-ին Երեւանում ՆԳ նախարարի եւ Եվրոպական հանձնաժողովի Միգրացիայի եւ ներքին գործերի գլխավոր տնօրենի տեղակալ Յոհաննես Լուխների հետ հանդիպման ընթացքում, եւ պատրաստակամություն են հայտնել համագործակցելու նաեւ այդ օրակարգի շուրջ:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՀԵՌԱՑՎԵԼ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ

Դեկտեմբերի 17-ին տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Վարչության նիստ, որը վարել է Վարչության նախագահ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Չարենցավանի Տարածքային կազմակերպության խորհրդի նախագահի պաշտոնում հաստատվել է Արթուր Գալստյանի, իսկ Ապարանի Տարածքային կազմակերպության խորհրդի նախագահի պաշտոնում՝ Էդգար Փարվանյանի թեկնածությունը:

Հաստատվել են Կուսակցության անդամակցելու հայտ ներկայացրած քաղաքացիների դիմումները:

Քննարկվել են կարգապահական բնույթի հարցեր, Վարչության որոշմամբ, ինչպես արդեն գրել էինք, Հակոբ Ասլանյանը հեռացվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից:

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԸ՝ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԻՋԱՆՑՔ»-Ի ՄԱՍԻՆ

Մոտ ժամանակներում տեղ կունենա Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի հանդիպում: Այս մասին լրագրողների հետ զրույցում հայտարարեց ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանը:

«Մյուս հանդիպման ամսաթվի վերաբերյալ դեռ պայմանավորվածություն չունենք, բայց ես կարծում եմ, որ մոտ ժամանակներում հանդիպում կլինի, որովհետեւ կանոնակարգի քննարկման ու հաստատման փուլերում եղել է պայմանավորվածություն, որ կանոնակարգի ուժի մեջ մտնելուց հետո, այո, պետք է հանդիպել ու շարունակել աշխատանքները»,- նշել է Գրիգորյանը:

Խոսելով «Զանգեզուրի միջանցք»-ի մասին՝ փոխվարչապետը նշել է. «Մենք քանի անգամ ենք կրկնել՝ կան կարմիր գծեր, որոնց հատումն ուղղակի անհնարին է, ես նույնիսկ չեմ ուզում քննարկել ու մեկնաբանել այդ տերմինը, չի լինելու նման բան, ուղղակի չի լինելու»,- նշել է Գրիգորյանը:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇՆՈՐՀԻՎ

Ռուսաստանը կառուցողական քայլեր է ձեռնարկում Անդրկովկասում, եւ մեծապես այդ ջանքերի շնորհիվ Բաքուն եւ Երեւանը հաջողությամբ ընթանում են երկկողմ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ: Այս մասին օտարերկրյա պետությունների ռազմական կցորդների համար ճեպազրույցում հայտարարել է ՌԴ ԶՈ գլխավոր շտաբի պետ Վալերի Գերասիմովը:

«Ի հակակշիռ Արեւմուտքի ապակառուցողական գործողությունների՝ Ռուսաստանը կառուցողական քայլեր է ձեռնարկում այս տարածաշրջանում, մեծ մասամբ մեր պետության ջանքերի շնորհիվ, ակնհայտ է Բաքվի եւ Երեւանի դրական առաջընթացը երկկողմ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ», - ասել է Գերասիմովը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՄՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԿՈԼԵԳԻԱՆ 312 ՁԱՅՆ Է ՏՎԵԼ ԹՐԱՄՓԻՆ

ԱՄՆ 50 նահանգների Ընտրողների կոլեգիան հաստատել է նախագահական ընտրությունների արդյունքները եւ ընտրված նախագահ Դոնալդ Թրամփին է տվել 312 ձայն: Դեմոկրատական կուսակցության թեկնածու, փոխնախագահ Քամալա Հարիսը ստացել է ընտրիչների 226 ձայն: Այս մասին հաղորդում է CNN-ը:

Յուրաքանչյուր ընտրող իր ձայնը տվել է այն թեկնածուին, որին պետք է ներկայացներ:

Դոնալդ Թրամփը նախագահի պարտականությունները կստանձնի 2025 թ. հունվարի 20-ից:

ԱՄՆ նախագահի եւ փոխնախագահի ընտրություններն անուղղակի են: Քվեարկելու իրավունք ունեցող ԱՄՆ քաղաքացիներն ընտրում են ոչ թե կոնկրետ թեկնածուներին, այլ Ընտրողների կոլեգիայի անդամներին՝ ընտրիչներին: Ընտրիչներն այնուհետեւ իրենց ձայնը տալիս են տվյալ նահանգում առավելագույն ձայներ ստացած թեկնածուի օգտին: Յուրաքանչյուր նահանգի կոլեգիայի անդամների թիվը համապատասխանում է Կոնգրեսում այդ նահանգի անդամների թվին: Այն թեկնածուն, որը ստանում է ընտրիչների ձայների բացարձակ մեծամասնությունը՝ 538-ից առնվազն 270-ը, ընտրվում է նախագահ:

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԳԱԶԱՅՈՒՄ

Իսրայելի ռազմական գործողությունների հետեւանքով Գազայում եւ գրավյալ արեւմտյան ափին սպանվել է ավելի քան 12800 աշակերտ, առնվազն 20.942-ը վիրավորվել է. Ալ Ջազիրայի փոխանցմամբ, հայտնում է Պաղեստինի կրթության նախարարությունը:

ԵՐԿՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆԸ ՆՊԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Եվրամիությունը պատրաստ է համագործակցել Սիրիայում իշխանության եկած «Հայաթ Թահրիր ալ-Շամի» հետ՝ երկրի վերականգնմանը նպաստելու համար, ասել է Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը:

«Մեր ավագ դիվանագետը (Սիրիայում ԵՄ պատվիրակության ղեկավարը) վերադառնում է Դամասկոս: Մենք արդեն ունենք եվրոպական ներկայություն Դամասկոսում մեր մարդասիրական թիմերի միջոցով: Մենք միշտ պահպանել ենք մեր ներկայությունը Սիրիայում՝ օգնելու կարիքավորներին: Միեւնույն ժամանակ հարգելով Ասադի ռեժիմի հետ կապ չունենալու, ֆինանսավորելու կամ համագործակցելու սկզբունքը, - երեքշաբթի օրը Անկարայում Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի հետ համատեղ ասուլիսում ասել է ԵՀ ղեկավարը:

Հիշելով նախկինում ԵՄ-ի կողմից Սիրիային տրամադրված մարդասիրական օգնությունը՝ ֆոն դեր Լայենը նշել է, որ աջակցությունը պետք է տրվի «վերակառուցման նոր շեշտադրմամբ, եւ դա կլինի քայլ առ քայլ մոտեցում»:

ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ՆԱԽԱԳԻԾ

ՍԵՆԱՏՈՐՆԵՐԸ՝ ՀՕԳՈՒՏ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Ամերիկյան սենատորներ Գարի Փեթերսը եւ Բիլ Քեսիդին Սենատում երկկուսակցական համադարփակ մի բանաձեւի նախագիծ են ներկայացրել, որը դատապարտում է Ադրբեջանի կողմից Արցախի էթնիկ զտումները, կոչ է անում Ալիեւի ցեղասպան ռեժիմի դեմ նպատակային պատժամիջոցներ սահմանել, պահանջում անհապաղ ազատ արձակել աղօրինի գերության մեջ պահվող հայերին, ինչպես նաեւ ԱՄՆ կառավարությանը հորդորում է դադարեցնել ռազմական օգնությունն Ադրբեջանին եւ օժանդակել միջազգային պատշաճ պատասխանվածությամբ՝ արցախահայության վերադարձի իրավունքի իրացմանը:

Մեկնաբանելով բանաձեւի նախագծի շրջանառումը՝ Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը նկատել է. «Մենք ողջունում ենք սենատորներ Փիթերսի եւ Քեսիդիի կողմից Սենատում այս բանաձեւի ներկայացումը, որպես Արցախի իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ Կոնգրեսի երկկուսակցական աջակցության եւս մեկ նշան: Խստորեն դատապարտելով Ադրբեջանի դաժան գործողությունները եւ կոչ անելով միջազգային վճռական միջոցների ձեռնարկման՝ այս բանաձեւը վերահաստատում է ամերիկյան հավատարմությունն Արցախի իրավունքներին՝ ստեղծելով պատասխանատվության եւ արդարության ամուր շրջանակ»:

Բանաձեւի համահեղինակ Բիլ Քեսիդին իր հերթին նկատել է. «Ադրբեջանը պատանդ է պահում Եվրոպային էներգիայի պատճառով, բայց Լուիզիանայում բավականաչափ էներգիա կա Եվրոպայի կարիքները բավարարելու համար: Աշխարհը չի կարող հանդուրժել բռնապետին»:

Ներկայացված բանաձեւով մասնավորապես առաջարկվում է՝

1. Արցախահայության շրջափակումն ու հետագա ռազմական գործողությունները որակել որպես էթնիկ զտում:
2. Նպատակային պատժամիջոցներ սահմանել Արցախում հայ բնակչության դեմ հանցագործություններում ներգրավված ադրբեջանցի պաշտոնյաների դեմ:
3. Արցախահայության վերադարձի իրավունքի իրացման համար միջազգային անվտանգային երաշխիքների տրամադրում, ինչն ի զորու կլինի կանխել նրանց նկատմամբ հերթական ագրեսիան:
4. Ամերիկյան օժանդակության տրամադրում՝ Հայաստանում արցախահայության կարիքները պատշաճ հոգալու համար: Նույն նպատակով ամերիկյան կառավարության կողմից միջազգային ջանքերի առաջնորդում:
5. Ազատության աջակցության ակտի 907-րդ հոդվածի (907-րդ բանաձեւ) կիրարկում:
6. Հայաստանի Հանրապետության անվտանգությանն աջակցություն՝ ԱՄՆ-Հայաստան գործընկերության զարգացում անվտանգության ոլորտում:
7. Ամերիկյան դիվանագիտության հավելյալ ակտիվություն Հարավային Կովկասում՝ նպաստելու Ադրբեջանի կողմից անարդարացիորեն բանտարկված բոլոր հայերի ազատ արձակմանը,
8. Ամերիկյան դիվանագիտության հավելյալ ակտիվություն՝ Լեռնային Ղարաբաղի հայկական մշակութային ժառանգության պաշտպանության գործում:

Բանաձեւի տեքստում հատուկ անդրադարձ կա հայ ռազմագերիների խնդրին՝ պահանջելով ամերիկյան միջնորդություն վերջիններիս ազատ արձակման միջազգային ջանքերում:

Բանաձեւի տեքստում նաեւ ընդգծում է՝ միջազգային իրավական փորձագետները, այդ թվում՝ Միջազգային քրեական դատարանի նախկին գլխավոր դատախազ Լուիս Մորենո Օկամպոն եւ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի Ցեղասպանության կանխարգելման հարցերով նախկին հատուկ խորհրդական Խուան Մենդեսը նշել են՝ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի շրջափակումը խախտում է ՄԱԿ-ի ցեղասպանության կոնվենցիան:

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը շարունակում է աշխատանքները՝ ինչպես այս, այնպես եւ համանման այլ բանաձեւերի շուրջ, հնարավորինս մեծ կոնգրեսական աջակցություն ապահովելու եւ առաջիկայում դրանց ընդունմանը հասնելու ուղղությամբ:

Հայ Դատի կենտրոնական գրասենյակ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՐՑԵՐ

Ֆրանսիա կատարած աշխատանքային այցի շրջանակում դեկտեմբերի 17-ին պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը հանդիպում է ունեցել Ֆրանսիայի Սենատի արտաքին հարաբերությունների, պաշտպանության եւ զինված ուժերի հանձնաժողովի նախագահ Սեդրիկ Պերրինի ու Սենատի մի շարք անդամների հետ:

Քննարկվել են պաշտպանության բնագավառում երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր:

ՀՀ պաշտպանական գերատեսչության ղեկավարը կարեւորել է համագործակցության բարձր մակարդակն ու զարգացման հեռանկարները՝ նշելով, որ ձեռքբերումները հնարավոր են եղել Սենատի շարունակական աջակցության շնորհիվ:

Սեդրիկ Պերրինը վերահաստատել է համագործակցության զարգացման գործում Սենատի աջակցության նշանակությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ տարածաշրջանային անվտանգության սպառնալիքներին առնչվող հարցեր:

ՄԻՀՐԱՆՅԱՆԻ ՄՈՒՏՔԸ՝ ՈՉ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՔԱՅԼ. ԶԱԽԱՐՈՎԱ

ՌԴ-ն Միհրանյանի մուտքը Հայաստան արգելելը համարում է Երեւանի ոչ բարեկամական քայլ: Այս մասին ճեպազրույցում ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Մենք Անդրանիկ Միհրանյանի մուտքի արգելքը դիտարկում ենք որպես ոչ բարեկամական քայլ: Դա հակասում է մեր երկկողմ հարաբերությունների դաշնակցային կարգավիճակին: ՌԴ ԱԳՆ-ն պաշտոնական հարցում է ուղարկել հայկական իշխանություններին՝ պարզաբանումներ պահանջելով: Ռուսական կողմը քանիցս Երեւանին կոչ է արել հրաժարվել երկիր ՌԴ քաղաքացիների մուտքն արգելելու «արատավոր գործելակերպից», որոնք ինչ-որ պատճառներով անհարմար են դարձել իշխանություններին»,- նշել է Զախարովան:

Զախարովայի խոսքով՝ սա հատկապես տարօրինակ է թվում Հայաստանի իշխանությունների մշտական հայտարարությունների ֆոնին՝ իրենց բացության, դեմոկրատականության եւ բազմակարծությանն իրենց հավատարմության մասին:

Զախարովան ճեպազրույցում անդրադարձել է Բաքվի՝ այսպես կոչված «Արեւմտյան Ադրբեջանի» մասին հայտարարություններին՝ նշելով. «Արժե պաշտոնական Երեւանից հետաքրքրվել, թե ինչպես է նա վերաբերվում նման հայտարարություններին: Ռուսաստանի դիրքորոշումը հայտնի է եւ ամրագրված է, մասնավորապես, եռակողմ պայմանավորվածությունների հումանիտար բլոկում»:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԵՑՎԵԼ Է

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԵՂԲԱՅՐԸ ԿՄՆԱ ԱԱԾ ՄԵԿՈՒՍԱՐԱՆՈՒՄ

Արցախյան պատերազմների մասնակից, հասարակական գործիչ, ԱԺ նախկին պատգամավորի եղբոր՝ Մերոբ Գասպարյանի կալանքը երկարաձգվել է եւս մեկ ամսով: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում տեղեկացրեց Գասպարյանի պաշտպան Էրիկ Ալեքսանյանը:

«Որեւէ նոր ապացույցներ քննիչը չէր ներկայացրել: Նախորդ կալանքի ժամկետը երկարացվել էր մեկ ամիս ժամանակով ու դատարանը արձանագրել էր, որ հիմնավոր կասկածի շեմը նվազած վիճակում է գտնվում», - ասաց Ալեքսանյանը:

Գասպարյանի պաշտպանը նշեց, որ իրավիճակ է ստեղծվել, երբ որեւէ նոր փաստական տվյալներ չեն ներկայացրել եւ դատարանն այս անգամ եւս արձանագրեց, որ հիմնավոր կասկածի շեմը նվազած վիճակում է, բայց երկարաձգեց կալանքը՝ կրկին արձանագրելով, որ հաջորդ անգամ այս փաստական տվյալները բավարար չեն լինելու կալանքի ժամկետը երկարացնելու համար:

«Այսինքն՝ մեկ անգամ արդեն իսկ դատարանը նման արձանագրում արել է, եւ պարզ տրամաբանությունը հուշում էր, որ հաջորդիվ քննարկումը իրականացնելուց հետո՝ այդ անբավարարության պայմաններում պետք է կայացներ հակառակ որոշումը: Բայց կրկին ժամկետը երկարացրեց՝ եւս մեկ ամսով՝ նույն արձանագրումը կատարելով: Սա մի փոքր իրավական կազուս է առաջացնում, ինչը որ պաշտպանության կողմը որոշումը ստանալուց հետո կբողոքարկի անպայման», - ասաց Գասպարյանի պաշտպանը:

Թե ինչու դատարանը նման որոշում կայացրեց, Ալեքսանյանն ասաց, որ դրա պատասխանը չունի, եւ կարելի է հարցը դիտարկել միայն տրամաբանորեն:

«Որոշումն անսպասելի էր այնքանով, որքանով այդ առաջին արձանագրումից հետո կալանքը չպետք է երկարացվեր, պետք է առնվազն այլընտրանք կիրառվեր կամ խափանման միջոցի պայմանի հիմնավոր կասկածի բացակայության ամապնդված չլինելու պայմաններում բացակայության հիմքով՝ պետք է կալանքի երկարացումը մերժվեր: Հենց նույն դատական ակտում արձանագրում արել է այն մասին, որ այդ որոշումը կայացվել է փաստական, լրացուցիչ տվյալներ չունենալու պայմաններում, բայց հակառակ որոշումն է կայացրել, իրավական կազուսը դրանում է», - ասաց Ալեքսանյանը:

Իրավական առումով անտրամաբանական շղթա է ստեղծվել, ամեն ինչ հնարավոր է, ասաց փաստաբանը՝ պատասխանելով մեր այն հարցին, որ հաջորդ ամիս էլ նույն կերպ կարող են կալանքը երկարացնել՝ առանց հիմնավոր փաստերի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 14-ին՝ ժամը 18:00-ին «Աբովյան» բժշկական կենտրոնից ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել, որ կտրած-ծակած վերքերով բուժօգնության են տեղափոխվել 21-ամյա երկու երիտասարդ, որոնցից մեկը՝Բյուրեղավանի, մյուսը՝Աբովյանի բնակիչ:

Համայնքային ոստիկանության Կոտայքի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ երիտասարդները վնասվածքները ստացել են Աբովյան քաղաքի Ռոսիայի փողոցում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ:

Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Համայնքային ոստիկանության Կոտայքի բաժնի եւ Քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ժամը 17:50-ի սահմաններում Ռոսիայի փողոցում մի խումբ երիտասարդների միջեւ անձնական հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ հիվանդանոց տեղափոխվածներին դանակահարել է Աբովյան քաղաքի բնակիչ 20-ամյա երիտասարդը: Նա եւ վիճաբանության մասնակից 20-ամյա մեկ այլ երիտասարդ հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել են Համայնքային ոստիկանության Կոտայքի բաժին:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝հանցագործության գործիք դանակը հայտնաբերելու ուղղությամբ:

ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 2-ին վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ առողջապահության նախարարի նախկին տեղակալ, ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախկին նախարար, ՀՀ հաշվեքննիչ պալատի նախկին նախագահ Լեւոն Յոլյանից եւ նրան փոխկապակցված անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

1 անշարժ գույք՝ Երեւան քաղաքում, 1 անշարժ գույք՝ Ծաղկաձոր քաղաքում, 3 անշարժ գույք՝Արտավազ գյուղում, 1 անշարժ գույք՝ Արտաշատ քաղաքում եւ 1 տրանսպորտային միջոց, որոնց շուկայական արժեքը կազմում է ավելի քան 628 միլիոն դրամ.

Երեւան քաղաքում երկու գույքի շուկայական արժեքները, որոնց հանրագումարը կազմում է ավելի քան 53 միլիոն դրամ.

3 իրավաբանական անձանցում ունեցած մասնակցություններ.

Ավելի քան 69 միլիոն դրամին համարժեք փոխառության պահանջի իրավունք եւ շուրջ 32 միլիոն դրամին համարժեք ավանդ.

1 միլիարդ 569 միլիոն դրամ՝ որպես ապօրինի եկամտի մնացորդի եւ օրինական եկամուտներով չհիմնավորվող՝ բարեխիղճ երրորդ անձանց փոխանցված դրամական միջոցների հանրագումար:

ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՆԳՆ-ՈՒՄ

ՀՀ ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանի հրամաններով զբաղեցրած պաշտոններից ազատվել են ՆԳՆ ՓԾ տնօրենի տեղակալ, ՓԾ գնդապետ Եգոր Կարապետյանը, ՆԳՆ ՓԾ տնօրենի տեղակալ, ՓԾ գնդապետ Դավիթ Սարգսյանը եւ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության Աշտարակի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Սերգեյ Մարտիրոսյանը:

«Ժողովուրդ» օրաթերթին այս մասին հայտնեց ՆԳՆ խոսնակ Նարեկ Սարգսյանը՝ նշելով, որ նրանք պաշտոններից ազատվել են սեփական դիմումների համաձայն:

ՆԳ նախարարի այլ հրամաններով՝ Վարդան Մաթեւոսյանը նշանակվել է ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետի տեղակալի պաշտոնին, իսկ Մարիամ Գեւորգյանը, Իրինա Դավթյանը եւ Տիգրան Մկրտչյանը վերանշանակվել են ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության պետի տեղակալի պաշտոններին:

Հիշեցնենք, որ ավելի վաղ գրել էինք, որ ArmLur.am-ի տեղեկություններով՝ Աշտարակի ոստիկանապետին անձամբ ազատել է Ներքին գործերի նորանշանակ նախարար Արփինե Սարգսյանը:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱՐՏԱՀՈՍՔՆ ՈՒ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻ ԱԶԱՏՈՒՄԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Աշտարակի ոստիկանապետին անձամբ ազատել է Ներքին գործերի նորանշանակ նախարար Արփինե Սարգսյանը:

Նրա ազատումը պայմանավորված է եղել մարզպետի օգնականի՝ թմրանյութի կասկածանքով բերման ենթարկելու գործընթացի վերաբերյալ լրատվամիջոցներին արտահոսք իրականացնելու դեպքով: Ասել է թե՝ ՔՊ-ից բացի որս է սկսվել իրավապահ համակարգի դեմ, ու առաջին պաշտոնյան ազատվել է արտահոսք իրականացնելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանն ու մարզային ոստիկանապետը խոր հակամարտության մեջ են:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ պաշտոնյաների ներքին կռիվը ուղիղ կապ ունի մարզպետի քրեական պատմությունների հետ հնարավոր առնչություններին:

Ուշագրավն այն է, որ մարզպետ Մովսիսյանը օրերս իր հարցազրույցում հրապարակավ կասկածի տակ է դրել իրավապահների գործողությունները: Նշենք, որ Արագածոտնի մարզային վարչության պետը Վարդան Խաչատուրյանն է, իսկ ահա Աշտարակի բաժնի պետը՝ Սերգեյ Մարտիրոսյանը, որը երեկ՝ դեպքից հետո, ազատվեց պաշտոնից:

Հիշեցնենք, որ Shamshyan.com-ը գրել էր, որ դեկտեմբերի 16-ին Երեւան-Գյումրի ավտոճանապարհի Աշտարակ-Ագարակ հատվածում հայտնաբերել են կասկածյալի Mercedes-ը, ինչից հետո վարորդին՝Ա. Մարկոսյանին, թմրանյութ պահելու, օգտագործելու եւ տարածելու կասկածանքով տեղափոխել են ոստիկանության Աշտարակի բաժին:

Վարորդի մոտ հայտնաբերել են խոշոր չափի թմրամիջոց՝ «մարիխուանա» տեսակի:

Դեպքի փաստով ոստիկանության Աշտարակի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք, հնարավոր է, փոխանցվեն ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչություն:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 17-ից 18-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 110 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՑՆՑՈՂ ՊԱՏԱՍԽԱՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել՝ Տավուշի մարզպետարանը տեղեկություններ ունի՞ , թե 2024 թ. դեկտեմբերի 4-ի դրությամբ մարզի հանրակրթական դպրոցների շենքերից քանի՞սն ունի հիմնանորոգման, քանի՞սը՝ վերանորոգման, քանի՞սը՝ մասնակի նորոգման կարիք, խնդրում ենք հայտնել այդ տեղեկատվությունը: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների հիմնանորոգման, վերանորոգման կամ մասնակի նորոգման խնդիրներով զբաղվում է ՀՀ փոխվարչապետի գրասենյակի կողմից ստեղծված մասնագիտական խումբը, ինչի վերաբերյալ Տավուշի մարզպետի աշխատակազմը պարբերաբար տեղեկացվում է»: Մարզպետի աշխատակազմը պարբերաբար տեղեկացվում է հիմնանորոգման, վերանորոգման կամ մասնակի նորոգման կարիք ունեցող, իր ենթակայության ներքո գործող մարզի հանրակրթական դպրոցների մասին, ինչո՞ւ այդ տեղեկատվությունը չեն տրամադրում:

ՄԱՐԶՊԵՏԸ ԽՆԴԻՐԸ ԳՑՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՒՍԵՐԻՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք, թե Տավուշի մարզում ներկայումս հակակարկտային քանի՞ կայան է գործում, 2018 թվականից հետո մարզում քանի՞ կայան է տեղադրվել, 2025 թվականին քանի՞ կայան է նախատեսվում տեղադրել: Մարզպետարանից պատասխանել են. «Մարզում գործում են 14 հակակարկտային կայաններ (Նոյեմբերյան համայնքում): Հետագայում կայանների տեղադրման նպատակահարմարությունը կարող է որոշել համայնքն իր միջոցներով»:

Մարզում գործող բոլոր 14 կայանները տեղադրվել են մինչեւ 2018 թվականը, մարզի 4 համայնքներից 3-ում՝ Դիլիջանում, Իջեւանում եւ Բերդում, հակակարկտային կայաններ չկան, մարզպետի պատասխանից դատելով՝ 2025 թվականին դրանք չեն նախատեսվում: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը հակակարկտային կայանների գնման, տեղադրման խնդիրը գցում է համայնքների ուսերին, մինչդեռ դա պետք է լիներ պետության խնդիրը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐԻ ՊԱՏԸ՝ ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ

Դիլիջանի համայնքապետարանի շենքից մոտ 150 մետր հեռավորությամբ գտնվող Մատինովի աղբյուրը կա: Այն կառուցել է Թիֆլիսի քաղաքապետ, հայազգի Ալեքսանդր Ստեփանյան-Մատինյանցը՝ Մատինովը: Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանն ու համայնքապետարանի պաշտոնյաներն ամեն օր անցնում են պատմական աղբյուրի մոտով, սակայն չեն նկատում, որ աղբյուրին կից պատի երեսպատման կարմիր քարերը թափվել են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

7 ՄԼՆ՝ ԱՄԱՆՈՐՅԱ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երեւանի քաղաքապետարանը ամանորյա եռուզեռի եւ նախապատրաստական աշխատանքների մեջ է: Տարբեր վարչական շրջաններ արդեն իսկ պատրաստվում են ամանորյա տոնական միջոցառումներին՝ դրանց հետ մեկտեղ առահովելով տարբերվող եւ յուրօրինակ զարդարանքներով:

Հենց նման նախաձեռնության շրջանակում էլ Էրեբունի վարչական շրջանի ամանորյա ծառայությունների ձեռքբերումների համար Երեւանի քաղաքապետարանը հատկացրել է 7 մլն հազար դրամ:

Երեւանի քաղաքապետարանը Երվանդ Սարգսյան Ռուդոլֆի ԱՁ-ի հետ պայմանագիր է կնքել Երեւան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի փողոցների տոնական լուսավորության ծառայությունների համար:

Պայմանագիրը կնքվել է էլեկտրոնային աճուրդի եղանակով:

Պայմանագրող սահմանվում է. «Ամանորյա տոներին ընդառաջ Էրեբունի վարչական շրջանի կենտրոնական փողոցները՝ Տիգրան Մեծ, Էրեբունի եւ Սասունցի Դավիթ, ձեւավորել տոնական լույսերով եւ լուսային դեկորներով: Էրեբունի փողոցն ամբողջությամբ՝ երկու կողմերից, ամրացնել ամուր մետաղալարերով, որոնց վրա պետք է կախել լուսային դեկորներով շղթաներ: Շղթային ամրացված դեկորների միջանկյալ հեռավորությունը պետք է լինի 2մ, սյունից սյուն: Թափվող լույսերը պետք է ունենան սառցե բեկորների տեսք: Շղթաները փողոցների վրա պետք է ամրացվեն հնարավորինս խիտ տարբերակով՝ բոլոր առկա սյուների վրա: Էրեբունի արգելոց թանգարանի հարակից տարածքում տեղադրել 2025 թվականի պատկերով լուսային դեկոր՝ լեդ լույսերով, որի բարձրությունը՝ 2,5-3 մետր, երկարությունը՝ 5 մետր: Այն պետք է լինի երկաթե կոնստրուկցիայով, որն ամբողջությամբ պատված կլինի լեդ լույսերով: Կայարանամերձ հրապարակում՝ դեպի գլխավոր տոնածառ տանող հատվածում, կառուցել 8 մետր երկարությամբ լուսային կամարի տեսքով ուղի, իսկ 2 մուտքերի մոտ կառուցել մետաղական կոնստրուկցիայով լուսային կամարներ: Անհրաժեշտ է Էրեբունի թանգարանի հարակից տարածքում եւ վարչական շրջանի տարբեր հատվածներում կատարողի կողմից տեղադրվեն մեծ խաղալիքների, նվերների տուփերի կամ հրեշտակների տեսքով լուսային դեկորներ՝ ընդհանուր 8 հատ»: Ձեւավորումը ավարտելուց հետո՝ մատակարարը պետք է երեկոյան ժամին լուսանկարահանի եւ տեսանկարահանի ամբողջ ձեւավորումը, պատրաստի 1-2 րոպե տեւողությամբ տեսանյութ եւ տրամադրի պատվիրատուին:

Ըստ պայմանագրի՝ ամանորյա տոներից հետո պետք է կազմակերպել ամբողջ գույքի՝ լուսային շղթաների եւ դեկորների ապամոնտաժումը կատարողի կողմից եւ միջոցներով՝ պատվիրատուի սահմանած ժամկետներում:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր՝ 2 մլն դրամ Երեւանի քաղաքապետարանը հատկացրել էր Աջափնյակ վարչական շրջանում ամանորյա միջոցառումը կազմակերպելու համար, իսկ 5 մլն դրամ էլ հատկացվել էր Նուբարաշեն վարչական շրջանում ամանորյա միջոցառման համար, 15 մլն 939 հազար դրամ Արաբկիր վարչական շրջանի ամանորյա զարդարանքների համար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԱԿԲԱ» ԼԻԶԻՆԳ

0,5% ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Toyota Material Handling ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչ «Մետատեկ» ընկերությունը պահեստային տեխնիկայի, փաթեթավորող սարքավորումների սպասարկման եւ վաճառքի միակ մասնագիտացված ընկերությունն է Հայաստանում:

2006թ.-ին հիմնադրված ընկերությունը Հայաստանում տեխնիկայի ամենախոշոր ներկրողներից մեկն է եւ տեղական շուկայում ներկայանում է լայն տեսականիով:

«Ակբա» Լիզինգի եւ «Մետատեկ» ընկերության համագործակցության արդյունքում ընկերության ներկայացրած տեխնիկաները հնարավոր է ձեռք բերել «Ակբա» Լիզինգի միջոցով՝ տարեկան փաստացի 0.5% տոկոսադրույքով:

««Ակբա» Լիզինգն ու «Մետատեկ» ընկերությունը միասին համագործակցում են երկար տարիներ եւ այսօր այդ համագործակցությունը նոր շունչ է ստանում: Շինարարության, արտադրության, ինչպես նաեւ պահեստային տնտեսությունների ոլորտում գործող տնտեսվարողներին պետական սուբսիդավորման ծրագրի շրջանակում առաջարկում ենք ֆինանսավորման լավագույն պայմանները՝ կանխավճար սկսած 10%-ից, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը՝ սկսած 0.5% տոկոսադրույքից»,- նշել է «Ակբա» Լիզինգի մատակարարների հետ համագործակցության բաժնի ղեկավար Վահագն Շմավոնյանը:

«Մետատեկ» ընկերությունը գործում է ավելի քան 15 տարի եւ այս տարիների ընթացքում իրագործել ենք բազմաթիվ նախագծեր՝ Հայաստան բերելով միջազգային փորձն ու որակը: Մենք առաջարկում ենք խորհրդատվություն եւ նախագծում, ժամանակակից լուծումներ, ինչպես նաեւ ցանկացած տեխնիկա եւ սարքավորումներ՝ պահեստային տնտեսությունների վերջնական շահագործման համար: «Մետատեկ» ընկերության գործընկերը լիզինգային շուկայի առաջատար «Ակբա» Լիզինգն է, որի շնորհիվ հնարավոր է ընկերության տեսականին ձեռք բերել ֆինանսական լավագույն պայմաններով: «Ակբա» Լիզինգի հետ համագործակցության արդյունքում ստեղծում ենք էլ ավելի նպաստավոր պայմաններ հայ գործարարների համար՝ օպտիմիզացնելու եւ ավտոմատացնելու իրենց պահեստային տնտեսությունները, ինչպես նաեւ նվազեցնելու իրենց աշխատակիցների ֆիզիկական ծանրաբեռնվածությունը»,- նշել է «Մետատեկ» ընկերության վաճառքի տնօրեն Արա Գրիգորյանը:

«Ակբա» Լիզինգի 100% բաժնետերն Ակբա բանկն է:

«Ակբա» Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

IDBank-Ը, ԻԴՐԱՄԸ ԵՎ idplus-Ը՝ Big Christmas Market-ՈՒՄ

Big Christmas Market with Coca-Cola ցուցահանդես-տոնավաճառն այս տարի եւս քաղաքը հարստացնելու է ամանորյա շնչով, հեքիաթային տրամադրությամբ ու շամտ նվերներով: Տոնական այս ամենամեծ, իր մասշտաբներով բացառիկ տոնավաճառին, իհարկե, մասնակցում են նաեւ IDBank-ը, Իդրամը եւ idplus լոյալության հարթակը: Բացի այդ, IDBank-ը, Իդրամն ու idplus-ն այս տարի որպես հովանավորներ են միացել տոնավաճառին:

Տոնավաճառն այս անգամ աննախադեպ մեծ մասշտաբներ ունի եւ անցկացվելու է դեկտեմբերի 18-ից 22-ը: Ընկերությունների տաղավարները ամանորյա հատուկ առաջարկներ են ունենալու այցելուների համար, զարդարված են լինելու տոնական հեքիաթին համապատասխան ու ստեղծելու են բարձր տրամադրություն:

Իդրամը հասանելի է լինելու մասնակից գրեթե բոլոր ընկերությունների տաղավարներում, որտեղ վճարելիս տոնավաճառի այցելուները կստանան 25% բոնուս: Իսկ բոնուսները կարող են օգտագործել անմիջապես տոնավաճառի ընթացքում՝ տաղավարներից գնումների ժամանակ: Ինչպես միշտ, այնպես էլ Ամանորին ընդառաջ տոնական գնումները շահավետ են լինելու Իդրամի հետ:

IDBank-ի եւ Իդրամի տաղավարում թիմը ավելի մանրամասն է ներկայացնելու ընկերությունների բոլոր պրոդուկտներն ու ծառայությունները, տեղում լինելու են նաեւ տերմինալներ, որպեսզի հաճախորդները կարողանան լիցքավորել իրենց դրամապանակներն ու վճարումներ կատարել QR-ով՝ օգտվելով բացառիկ բոնուսներից:

Դե ինչ, հանդիպում ենք դեկտեմբերի 18-22-ին, Մերիդիան էքսպո կենտրոնում: Հաճելի ու շահավետ գնումներ ենք մաղթում:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

«Կոնվերս» բանկի 5 մլրդ ՀՀ դրամ եւ 5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում եւ ներառվել հիմնական Abond ցուցակում: Վերոնշյալ պարտատոմսերով թույլատրվել է հասցեական առեւտուրը եւ Ռեպո գործարքների կնքումը:

Բանկում հիշեցրել են, որ մինչեւ այս տարեվերջ ցուցակված բոլոր, այդ թվում՝ այս պարտատոմսերից ստացված եկամուտը չի հարկվելու, ինչի շնորհիվ դրանք առավել գրավիչ են դառնում ներդրումների ու խնայողությունների կառավարման տեսանկյունից:

Նշենք, որ ցուցակված դրամային պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը 9.75% է, իսկ դոլարային պարտատոմսերինը՝ 4.5%, մարման ժամկետը՝ համապատասխանաբար 2 եւ 3 տարի, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ կիսամյակային: Տեղաբաշխման հայտերի ավելի քան 80%-ը ներկայացվել էր Converse Mobile հարթակով՝ ֆիզիկական անձ հաճախորդների կողմից:

«ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՕՐԵՆԸ՝ BACEE-Ի ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

«Կոնվերս» բանկը հպարտությամբ հայտնում է, որ բանկի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն Հրանտ Հակոբյանն ընտրվել է Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի բանկերի ասոցիացիայի (BACEE) հոգաբարձուների խորհրդի անդամ:

Այս նշանակալից իրադարձությունը հստակ արտացոլում է «Կոնվերս» բանկի հանձնառությունը՝ նպաստելու տարածաշրջանային համագործակցությանը, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի ֆինանսական ոլորտի զարգացմանը:

Պարոն Հակոբյանը BACEE-ի խորհրդի աշխատանքին է միանում ֆինանսների կառավարման եւ ռազմավարական պլանավորման ոլորտներում հարուստ փորձառությամբ: «Կոնվերս» բանկում կառավարման փորձառության, ինչպես նաեւ բանկային համակարգի ընդգրկուն գիտելիքի շնորհիվ նրա դերակատարումը նշանակալի կլինի BACEE-ի՝տարածաշրջանում կայուն զարգացմանն աջակցելու գործում:

«Հպարտ ենք, որ Հրանտ Հակոբյանն է ներկայացնելու «Կոնվերս» բանկը BACEE-ի խորհրդում: Իր փորձառությամբ նա առանցքային դերակատարում կունենա BACEE-ի նպատակների իրականացման, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի բանկային համայնքում կապերի ամրապնդման հարցում»,- ասել «Կոնվերս» բանկի գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանը:

Պարոն Հակոբյանը իր հերթին նշել է. «Ուրախ եմ, որ միանում եմ BACEE-ի խորհրդին եւ իմ ներդրումն եմ ունենալու կազմակերպության շարունակական հաջողության հարցում: Ես հատկապես ձգտելու եմ ռազմավարական զարգացման հարցում իմ փորձառությունն օգտագործել ներկա բարդ մակրոտնտեսական միջավայրում կողմնորոշման, թղթակցային բանկային հարաբերությունների բարելավման եւ տարածաշրջանում կազմակերպության հեղինակության աճի խթանման համար»:

BACEE-ն շահույթ չհետապնդող ասոցիացիա է, որի նպատակն է Կենտրոնական, Արեւելյան եւ Հարավարեւելյան Եվրոպայում, Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ֆինանսական ոլորտի կայունության եւ շարունակական զարգացման ապահովումը: Այն աջակցում է տարածաշրջանային բանկերին ֆինանսական գիտելիքների, նորարարական լուծումների ներդրմանը:

«Կոնվերս» բանկը Հայաստանի արագ զարգացող ունիվերսալ բանկերից է, որն առաջարկում է լայնածավալ ֆինանսական պրոդուկտներ, ծառայություններ է առաջարկում թե անհատներին, թե բիզնեսին: Բանկի լայն ցանցը ներառում է 33 մասնաճյուղ, մոբայլ եւ առցանց բանկային հարթակներ, որոնք գործարկվել են հաճախորդների աճող թվային պահանջներն առավելագույնս բավարարելու նպատակով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԵՐԵՎԱՆ ՕՓԵՆ» ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐԸ

«Ֆասթ» բանկի աջակցությամբ Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոցում անցկացվել է «Երեւան Օփեն» շախմատի 6-րդ միջազգային մրցաշարը: Մրցաշարն անցկացվել է երկու վարկանիշային խմբերով՝Ա եւ Բ: Ա մրցաշարին մասնակցել են 85 շախմատիստներ Հայաստանից, Իրանից, Ռուսաստանից, Բելառուսից, Հնդկաստանից, Ղազախստանից եւ Շվեդիայից, այդ թվում՝ 12 գրոսմայստերներ եւ 5 միջազգային վարպետներ: Բ մրցաշարին մասնակցել են 193 շախմատիստներ Հայաստանից, Ռուսաստանից, Իրանից եւ Իսպանիայից:

Երեւանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, «Երեւան Օփեն» 2024 շախմատի միջազգային մրցաշարի տնօրեն Նորայր Քալանթարյանն ասել է. «Բավականին ծախսատար միջոցառում է տարբեր ասպեկտներում եւ մրցանակային ֆոնդ կա բավականին բարձ, եւ ուժեղ շախմատիսների ենք հրավիրում՝հոգալով իրենց ծախսերը եւ կազմակերպչական այլ ծախսեր: Պետք է շնորհակալություն հայտնեմ «Ֆասթ» բանկին, իսկապես, առանց բանկի օժանդակության, աջակցության, շատ դժվար կլիներ բարձր մակարդակով մրցաշար անցկացնել»:

7 օր տեւող մրցաշարի ընդհանուր մրցանակային ֆոնդը 12 միլիոն ՀՀ դրամ էր: Ա խմբի հաղթող դարձավ Շվեդիան ներկայացնող գրոսմայստեր Պլատոն Գալպերինը, Բ խմբի հաղթող՝Հակոբ Հակոբյանը, իսկ բլից մրցաշարի հաղթող՝ գրոսմայստեր Կարեն Գրիգորյանը:

«Ֆասթ» բանկը 2022 թվականից ի վեր մշտապես հովանավորել է «Երեւան Օփեն» շախմատի միջազգային մրցաշարի անցկացումը: Որպես սոցիալապես պատասխանատու ընկերություն՝«Ֆասթ» բանկը դիտարկում է ոչ միայն սպորտային, այլեւ մշակության, կրթական, սոցիալական խնդիրները եւ անում առավելագույնը՝աջակցելու խնդիրների լուծմանը:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: «Ֆասթ» բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀԲԱՊԱԲԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

2025թ.-ի հունվարի 9-ին՝ ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 68 լոտ՝ ոսկյա իրերի ջարդոն 42,7 գր. ընդհանուր քաշով, որից 21,8 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 19 գր.) 500 հարգի՝ 312,600 ՀՀ դրամ, 16 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 15,5 գր.) 585 հարգի՝302.500 ՀՀ դրամ, 4.9 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 156.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 771.900 ՀՀ դրամ: Թիվ 69 լոտ՝ ոսկյա զարդ 20.8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 20.5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 400,000 ՀՀ դրամ: Թիվ 70 լոտ՝ ոսկյա զարդ 10.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 10 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 195.000 ՀՀ դրամ: Թիվ 71 լոտ՝ոսկյա ջարդոն 7.9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 136.000 ՀՀ դրամ: Թիվ 72 լոտ՝ոսկյա իրերի ջարդոն 5.7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 5.5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 107.000 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ. +374 43 00 42 27

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՋԵՅՆ ՕՍԹԻՆ

ԿՅԱՆՔԸ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է գրել Ջեյն Օսթինի մասին՝ այս անգամ ընթերցողին ծանոթացնելով գրողի հայտնի, հեսաֆրֆիր մտքերին:

• Մարդիկ այնքան շատ են փոխվում, որ ամեն անգամ կարող ես նրանց մեջ ինչ-որ նոր բան նկատել:

• Հպարտությունը շատ տարածված թերություն է: Իմ ամբողջ կարդացածն ինձ համոզել է, որ հպարտությունն իրոք շատ տարածված է, ու մարդն իր բնույթով խիստ հակված է դրան: Մեր մեջ քչերը կան, ովքեր ինքագոհ չեն ու չեն փայփայում այն միտքը, թե իրենք մյուսներից ավելի լավն են, լինի դա իրական, թե մտացածին: Սնափառությունն ու հպարտությունը տարբեր բաներ են, թեեւ այդ բառերը հաճախ որպես հոմանիշներ են օգտագործվում: Մարդը կարող է հպարտ լինել՝ զերծ լինելով սնափառությունից: Հպարտությունն այն է, ինչ մենք ենք մեր մասին մտածում, իսկ սնափառությունը՝ ինչ որ կցանկանայինք՝ ուրիշները մեր մասին մտածեին:

• Հեռավորությունը չնչին բան է երբ այն հաղթահարելու պատճառ ունես:

• Չկա ավելի մոլորեցնող բան, քան կեղծ համեստությունը: Հաճախ դա պարզապես մարդկանց մտքերը հաշվի չառնելն է, իսկ որոշ դեպքերում՝ սքողված պարծենկոտությունը:

• Ամենաիմաստուն եւ լավագույն մարդկանց, ավելի ճիշտ՝ նրանց ամենաիմաստուն եւ լավագույն արարքները կարող են որպես անմտություններ մատուցել այն մարդիկ, ում համար կյանքում առաջինը սրամտելն է:

• Ոչ մեկը չի կարող իրոք կրթված համարվել, եթե սովորական շրջապատին էապես չի գերազանցում: Այդպիսի կոչման արժանի կինը պետք է հիմնավոր գիտելիքներ ունենա երաժշտությունից, երգեցողությունից, նկարչությունից, պարից, ժամանակակից լեզուներից: Այս ամենից բացի՝ պետք է վայելուչ կեցվածքի ու քայլվածքի, ձայնի հնչերանգի ու արտահայտչականության տիրապետի, այլապես այդ բառին միայն կիսով չափ արժանի կլինի:

• Մենք բոլորս էլ սիրում ենք դասեր տալ, թեեւ սովորեցնում ենք բաներ, որոնք ինքներս էլ կարգին չգիտենք:

• Մեջս մի համառություն կա, որը չի թողնում, որ ուրիշների կամքով վախի մատնվեմ: Ամեն անգամ, երբ մեկը փորձում է ինձ վախեցնել, խիզախությունը մեջս գլուխ է բարձրացնում:

• Եթե դու լավ ես վերաբերվում քեզնից ինչ-որ բան պահանջողի հետ, դա կարող է քեզ մղել, որ անվերապահորեն ենթարկվես նրա ասածին՝ անգամ չսպասելով, որ դրա համար որեւէ հիմնավորում հնչի:

Ես չեմ կարող, ոչ էլ հարկավոր է, որ մտքիցս դուրս մղեմ այնտեղ ներխուժած ցավոտ հիշողությունները: Ամբողջ կյանքումս եսասեր եմ եղել, գոնե այդպես ապրել եմ, թեեւ սկզբունքներս այլ են եղել: Երեխա ժամանակ ինձ սովորեցրել են, թե ինչն է ճիշտ, բայց չեն սովորեցրել բնավորությունս շտկել: Ինձ բարձր սկզբունքներով են դաստիարակել, բայց թույլ են տվել, որ դրանց հետեւվելիս լինեմ հպարտ եւ մեծամիտ:

• Միակ բանը, որի համար նրան մեղադրում էին, հպարտությունն էր. թերեւս նա իրոք հպարտ էր, բայց եթե նույնիսկ այդպիսին չլիներ, դա հաստատ նրան կվերագրեին:

• Շատերը նրա մեջ տեսնում են այն, ինչ ինքն է ցանկանում, որ տեսնեն:

• Որքան փոփոխական են մարդու զգացմունքները. այժմ իր ցանկությունն է շարունակել մի ծանոթություն, որին նախկինում ամեն կերպ ուզում էր վերջակետ դնել...

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀԱՅՆ ՈՒՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԸ ԿՐԿԻՆ ԿՈՄԻՏԱՍ Է ՇՆՉՈՒՄ

«Հայն ունի ինքնուրույն երաժշտություն... Յուրաքանչյուր ազգի երաժշտությունն իր ազգի հնչական ելեւէջներեն կծնի ու կծավալվի: Հայ լեզուն ունի իր հատուկ հնարավորությունը, ուրեմն եւ համապատասխանող երաժշտությունը»

Կոմիտաս վարդապետը՝ հայ ազգի դիմագիծն է ասել:

Դեկտեմբերի 17-ի երեկոյան Առնո Բաբաջանյան համերգասրահում Կոմիտաս էր հնչում ու տարածվում մինչեւ մարդկանց սրտերը:

Դերասան, երգիչ Հայկ Պետրոսյանը, «Երեւան լարային քառյակ»-ը եւ «Լիլլա վոկալ» կվարտետը ներկայացրին Կոմիտասի կյանքի, երաժշտության ստեղծման գործընթացը: Երեկոյի ընթացքում հնչեցին նաեւ Կոմիտասի հանրահայտ մշակումները, ստեղծագործությունները:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Հայկ Պետրոսյանն ասաց, որ փորձում է Կոմիտասի երգերը երգել սովորել՝ ինչպես ուսանողը:

Հարցին՝ ի՞նչ մեսիջ կա համերգում թաքնված, Պետրոսյանը կատակեց. «Կոմիտասն ու մեսիջ բառը իրար չեն համապատասխանում»:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է նաեւ «Երեւան լարային քառյակ» խմբի անդամ Նարեկ Սահակյանի հետ, ով մեր նույնաբովանդակ հարցի վերաբերյալ ասաց. «Շատ դժվար բան եք ասում, յուրաքանչյուր ստեղծագործություն իր յուրահատկությունն ունի: Դեռեւս տեղին կլինի առանձնացնել «Գարուն ա» եւ «Կռունկ» ստեղծագործությունները, քանի որ բացի ժողովրդական պատմություն ունենալուց՝ նաեւ խորհուրդ են պարունակում իրենց մեջ», - նշել է երաժիշտը՝անդրադառնալով Կոմիտասի երաժշտությանն ու իր սիրելի ստեղծագործություններին:

Կոմիտասի ստեղծագործությունների մասին «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրուցել է նաեւ «Լիլլա վոկալ կվարտետ»-ի անդամ Դիանա Այվազյանը, ով պատմել է, թե ինչ է զգում, երբ երգում է «կոմիտասերեն». «Շատ մեծ պատասխանատվություն է Կոմիտասի ստեղծագործությունները ներկայացնել՝ինչպես նաեւ մեծ պատիվ: Կոմիտաս շատ են երգում, կարելի է կարծել, որ ոչնչով չես զարմացնի մարդկանց, ինչը մեծացնում է պատասխանատվությունը»:

Ահա այսպես, եւս մեկ անգամ ամենայն հայոց վարդապետն իր ստեղծագործության շուրջ էր համախմբել մի խումբ մարդկանց:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ,
ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ՝ ԽԱՂԻ ՄԱՍԻՆ



Իտալիայի առաջնության 16-րդ տուրի «Լացիո»-«Ինտեր» (0:6) խաղից հետո Հենրիխ Մխիթարյանը խոսել է միլանյան թիմի ապագա ծրագրերի մասին:

«Կարծում եմ՝ սա կարեւոր խաղ էր մեզ համար: Մենք դասեր էինք քաղել «Բայերի» դեմ խաղից, վերլուծել էինք տեղի ունեցածը եւ պատրաստ էինք հաղթելու այս երեկո: Մենք խաղում ենք երկու, երեք, նույնիսկ չորս մրցաշարերում: Իտալիայի գավաթ, Իտալիայի Սուպերգավաթ, Ա Սերիա եւ Չեմպիոնների լիգա:

Մենք խաղում ենք սրանք բոլորը հաղթելու համար: Չեմ կարող ասել, որ մենք 100 տոկոսով կհաղթենք յուրաքանչյուր խաղում, բայց մեր գլխավոր նպատակը դա է: Մենք ցանկանում ենք հնարավորինս հեռու գնալ»,- ասել է Մխիթարյանը DAZN-ի հետ զրույցում:

Հիշեցնենք, որ Մխիթարյանը «Լացիոյի» դեմ խաղում գոլային փոխանցում էր կատարել:

ԽԱՂԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է ԹՌԻՉՔԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Մադրիդի «Ռեալը» հետաձգել է թռիչքը դեպի Կատարի մայրաքաղաք Դոհա, հայտնում է AS-ը:

Միջմայրցամաքային գավաթի խաղարկության եզրափակչին մեկնելը հետաձգվել է ինքնաթիռի անսարքության պատճառով: Որոշում է կայացվել փոխել ինքնաթիռը:

Միջմայրցամաքային գավաթի եզրափակչում «Ռեալը» մրցելու է մեքսիկական «Պաչուկայի» հետ:

ՈՐՏԵՂ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԵԶՐԱՓԱԿԻՉԸ

Ազգերի լիգայի խաղարկության եզրափակիչը կանցկացվի կամ Իտալիայում կամ Գերմանիայում, հայտնում է ՈՒԵՖԱ-ի մամուլի ծառայությունը:

Այս երկրների հավաքականները կիանդիպեն հաջորդ տարվա մարտին մրցաշարի քառորդ եզրափակչում: Ջույգի հաղթողը եզրափակիչն անցկացնելու իրավունք կստանա:

Ազգերի լիգայի եզրափակիչը կկայանա հունիսի 8-ին: Մրցաշարի գործող չեմպիոնը Իսպանիայի հավաքականն է:

● *Դեկտեմբերի 21-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում կցուցադրվի «Հոբելյանական հաճախորդ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-8.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերի անհատույց (մշտական) օգտագործման տրամադրման կարգերը:

Սարգիս Իգիթյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերն առանց մրցույթի, անհատույց (մշտական) օգտագործման են տրամադրվում՝

- պետական կամ համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին,
- բարեգործական, հասարակական կազմակերպություններին եւ հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար,
- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին),
- «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրի շրջանակներում՝ մասնավոր գործընկերոջը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Օրենքով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության եւ համայնքների սեփականությանը պատկանող հողերը մշտական օգտագործման է տրամադրում համայնքի ղեկավարը՝ լիազորված պետական մարմնի գրավոր հայտի հիման վրա՝ հայտն ստանալու պահից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է վերականգնվել ծնողական իրավունքները:

Իրինա Սաղաթելյան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ծնողական իրավունքները կարող են վերականգնվել, եթե ծնողները կամ նրանցից մեկը փոխել են իրենց վարքագիծը, կենսաձեւը եւ (կամ) երեխայի դաստիարակության նկատմամբ վերաբերմունքը:

Ի Ծնողական իրավունքները վերականգնվում են դատական կարգով՝ ծնողական իրավունքներից զրկված ծնողի դիմումի հիման վրա: Ծնողական իրավունքների վերականգնման մասին գործերը քննվում են խնամակալության եւ հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ:

Ի Ծնողական իրավունքների վերականգնման մասին դիմումի հետ միաժամանակ կարող է քննության առնվել նաեւ երեխային ծնողներին կամ նրանցից մեկին վերադարձնելու մասին պահանջը:

Ի Երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերականգնումը կատարվում է՝ հաշվի առնելով նրա կարծիքը: Դատարանը, հաշվի առնելով երեխայի կարծիքը, իրավունք ունի մերժելու ծնողական իրավունքների վերականգնման հայցը, եթե ծնողական իրավունքների վերականգնումը հակասում է երեխայի շահերին:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծնողական իրավունքների վերականգնում չի թույլատրվում, եթե երեխան որդեգրված է, եւ որդեգրումը սահմանված կարգով չի վերացվել:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

ԱՄՆ-ի կինոարվեստների ակադեմիան հրապարակել է 10 անվանակարգում «Օսկար» կինոմրցանակի հավակնորդների շորթլիսթը՝ կարճ ցուցակը: Այս մասին նշված է «Օսկար» մրցանակաբաշխության կայքում: «Լավագույն արտասահմանյան գեղարվեստական ֆիլմ» անվանակարգում հաղթանակի համար հավակնում է 15 կինոնկար:

«Օսկար»-ի 97-րդ մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2025 թ. մարտի 2-ին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-5 - 9 -1 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 8 -1 +1
Կոտայքի նախալեռներ	-3 - 5 +3 + 5
Գեղարքունիք	-7 - 11 - 2 + 1
Լոռի	- 4 - 8 +1 + 4
Տավուշ	0 - 4 +3 + 6
Արագածոտնի լեռներ	- 6 - 9 0 - 2
Արագածոտնի նախալեռներ	-1 - 4 + 4 + 7

Արարատ	0 - 4 +6 + 8
Արմավիր	-1 - 5 + 5 + 7
Վայոց ձորի լեռներ	-6 - 10 0 - 2
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +12 + 14
Սյունիքի հովիտներ	0 + 3 + 8 + 10
Սյունիքի նախալեռներ	- 4 - 8 - 1 + 4
ԼՂՀ	- 3 - 7 0 + 6
Երեւան	0 - 2 + 2 + 4

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.12.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*